ԳԻՏՆԱԿԱՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«Երբ Սուրբ Գիրքը ճիշտ է մեկնաբանվում, դրախտը Հայաստանում է գտնվել… Հայաստանում է առաջինը ջրհեղեղը նահանջել և աղավնին նստել»[1]:

ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ

Սկզբունքային նշանակության գիտական յուրաքանչյուր հարցադրում համապատասխան մեթոդի, տվյալ պարագայում ակտուալիզմի սկզբունքի կիրառմամբ, նոր լույս է սփռում պատմական անցյալի իրադարձությունների և նրա ամբողջական ընկալման վրա: Այդպիսին է հայոց հնագույն պետականության որպես անդրենածին (ավտոխտոն) քաղաքակրթական երևույթի գնահատանքը՝ Աստվածաշնչյան հիպոթեզի, գենետիկական և լեզվաբանական տվյալների օբյեկտիվ ընդհանրացումը՝ նրանց լույսի տակ՝ գիտականամերձ հայտնի նենգափոխումների արժևորումը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ Եդեմական այգի, Հայկական լեռնաշխարհ, ավտոխտոն, գենետիկական հատկանիշ, (հայ) պետականություն, հելլենիզմ, (հայ) քաղաքակրթություն:

«Աստված մարդկությանը և մեզ՝ հայերիս մի որոշակի պատգամ ուներ,– գրում է սոցիալ փիլիսոփա Գևորգ Խրլոպյանը,– երբ Եդեմական այգին տնկեց Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատ, Տիգրիս և Արաքս գետերի ակունքներում[2]: Աստված շարունակեց այդ իր մտադրությունը, երբ նոր քաղաքակրթությունը սկսեց Արարատյան երկրից, երբ Նոյան տապանը խարսխեց Արարատի վրա: Այդ պատգամով էր, որ հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքը դարձրեց հայկական լեռնաշխարհի և տարածաշրջանի հնագույն կայսրություններից մեկը՝ Արարատյան թագավորությունը կազմավորեց Հայկական լեռնաշխարհում: Այս խորհրդի մեջ պետք է որոնել պատճառն այն իրողության, որ հայ ազգը շարունակում է իր վեց հազար տարվա պատմությունը, երբ իր հետ կյանք սկսածներից շատերը չգոյացան»[3]: Այսպիսով, լուծվեց երկու փոխկապակցված հիմնախնդիր. Առաջին՝ ցույց տրվեց քաղաքակրթության ծագման օջախներից մեկը[4], սահմանվեց հայոց կենսատարածքը:

---

[1] Lord Byrons Armenian Exercises and Poetry. Venice: in the Island of the St. Lazzaro, 1970, p. 8,10–12.

[2] Այդ մասին հանգամանորեն տես Շիրինյան Լ.Ղ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը. Երկրաքաղաքական–քաղաքակրթական ակնարկ. Եր. 2006, էջ 107; Арцруни А., Армянское нагорье и цивилизация, М. 1999, с. 5–6.

[3] Գ.Խրլոպյան, Հայաստանը տարածաշրջանի ջահակիր, « Մասիս» , փետրվար 1999:

[4] « … Հայաստանը նույնպես կարող է որակվել որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը,… ոչ ոք չի կարող ժխտել Նոյան տապանի մասին նրա խորհրդանշական կարևորությունը…Lang, David M., Armenia. Cradle of Civilization. London, 1970, p. 9»

Սուրբ Գրքի անթերի և ըստ էության անառարկելի տեքստը[1] հաստատվում է նորագույն գիտության վերջին տվյալներով՝գենետիկայի (ծագումնաբանություն, ժառանգականություն) հարուստ ապացուցողական բազայով: Մարդաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը հիշեցնելով, որ «ինչպես էլ լինի գենետիկական հետազոտությունները ամենաանաչառն են և ճշգրիտը», որ իրենց հետազոտությունները կատարվել են ամերիկացիների, էստոնացիների, ռուսների, իրանցիների, անգլիացիների, լիբանանցիների հետ, հաղորդում է, որ հայերը աշխարհում գենետիկորեն լավ ուսումնասիրված ժողովուրդների եռյակում են և պատասխանելով այն հարցին՝ «հայերը ներգաղթյալներ (վերաբնակիչներ) են այլ տարածաշրջաններից («являются ли армяне мигрантами из других регионов»), գրում է. «մեր տվյալներով, հայերը Հայկական լեռնաշխարհի անդրենածին (ավտոխտան) ժողովուրդն են» (« По нашим данным, армяне– автохтонный народ Армянского нагорья») (ընդգծումը իմն է.–Լ.Շ):

Նկատելի է Լ. Եպիսկոպոսյանի ձգտումը՝ հասնել առավելագույն ճշգրտության և սպառիչ պատասխանի արծարծվող հարցերի շրջանակում, և հավանաբար նկատի ունենալով նաև մերօրյա գիտականամերձ նենգափոխիչների (подтасовщики) ինտերնացիոնալ հավաքականությունը, վկայակոչում է միջազգային առաջատար այն գիտական կենտրոնները, որտեղ կատարվել են համապատասխան հետազոտությունները և գրախոսվող պարբերականները, որտեղ տեղի են ունեցել համապատասխան հրապարակումները[2]:

Ավելին, մոլեկուլյար–գենետիկական հատկանիշների միջոցով մենք, շարունակում է Լ. Եպիսկոպոսյանը, վերականգնեցինք հայերի գենետիկական պատմությունը, որը «տեղավորում է» 5000 տարվա ժամանակային հատվածում: Այդ տվյալները վերջերս, հաղորդում է Լ. Եպիսկոպոսյանը, հաստատվեցին հայտնի լեզվաբան Քուենտին Ատկինսոնի (Օքլենդ, Նոր Զելանդիա) կողմից. հայոց լեզվի առանձնացումը ընդհանուր հնդեվրոպական ծառի բնից կազմում է շուրջ 4,5 հազար տարի: « Իրարից անկախ կատարված գենետիկական և լեզվաբանական հետազոտությունների արդյունքների համընկնումը ապշեցուցիչ է և սկեպտիկները, և մարտնչող դիլետանտները,– ընդգծում է Լ. Եպիսկոպոսյանը,– հարկադրված են ընդունելու, որ հայերը այդուհանդերձ շուրջ 5000 տարեկան են»[3]:

Մեթոդաբանական նույն մոտեցումը, այն, որ «պատմությունը պետք է հենվի հավաստի տվյալների վրա», լույս է սփռում «արիացիներ» բառի վրա և այն հարցին՝ «ովքեր են արիացիները», պատասխանում է. «Դրանք նրանք են, որոնք հնդեվրոպական լեզուն երկրորդ անգամ Հայկական լեռնաշխարհի տարածք մտցրին, այսինքն նրանք (արիացիները.–Լ.Շ.) եկվորներ են : Նշանակում է, եկվորներ ենք նաև մենք: Այսինքն, մեզ անվանելով արիացիներ դրանով զգայապես կրճատում ենք մեր պատմությունը: Նրան մենք պետք է վեհացնենք մեր հոգու մեջ, իսկ գիտության մեջ պատմությանը պետք է վերականգնել օբյեկտիվորեն»[4]:

Բնական է, որ նոր հարցադրումներ գիտական հզոր պոտենցիալը լույս պետք է սփռի խունացած պատկերացումներ երբևէ հավաստիության շանս չունեցող ճշմարտանման պնդումների, գիտականամերժ խեղաթյուրումների, նենգափոխված տրամաբանական հիմքերով

[1] Աստուածաշունչ: Մատեան Հին և նոր Կտակարանների. Ս. Էջմիածին, 1994, Գիրք Ծննդոց: 2 Եղեմի պարտեզը, 8–15:

[2] Տե՛ս Армяне вместе с евреями оказились в тройке генетически хорошо исследованних народов.– «Новое время», 2013, 30 марта.

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

մեխանիկական բխեցումների և նրանց չափորոշիչներով ստեղծված դոգմատիկ մտակառույցների վրա: Հարցադրման պահանջների հարկադրանքը պահանջում է հետևապես, նոր թափ հաղորդել հայագիտական հետազոտություններին, մասնավորապես հայոց կենսատարածքում՝ Հայոց փթթուն քաղաքակրթության հազարամյակների պատմական օրրանում ծնված Հայաստանի, որպես պետականության, քաղաքակրթական երևույթի արժևորմանը:

Ուրվագծվող ալգորիթմի[1] լույսի ներքո նպատակահարմար ենք համարում վերահիրատարակել ժամանակին Բոստոնի հռչակավոր «Հայրենիք» ամսագրում Ա. Թ.–ի տպագրած՝ «**Հայ պետականությունը ըստ օտար պատմիչներու**» հոդվածը՝ որպես դարերի խորքը թափանցելու միջոց ուղղված, առաջին հերթին, խորհող մտավորականությանը և կենսական ավյունով լեցուն ուսանող երիտասարդությանը:

Եվ այսպես. Լ. Շ.
ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՕՏԱՐ ՊԱՏՄԻՉՆԵՐՈՒ
Գրեց՝ Ա. Թ.

Դեռ մինչև այսօր կան մարդիկ, որ կթերագնահատեն հայ պետականության տեսակարար կշիռը ընդհանուր պատմության և քաղաքակրթության մեջ:

Հին պատմիչները, սակայն, այլ կարծիքի էին: Որպես հաստատուն բերդ մը, քաղաքակիրթ, կազմակերպված և կարգապահ՝ հին Հայաստանը կերևար Արևելքի հեղհեղուկ և վտանգավոր ալիքներու մեջեն: Սահմանապահ գետի մյուս կողմը օտար բախտախնդիրները կտեսնեին «զինված ճիավորներ, որոնք կարգիլեին գետն անցնել, և ճիավորներեն վերև բլուրներու վրա շարքերով կանգնած էին հետևակ զորքեր, որոնք կարգիլեին դուրս գալ Արմենիա... Ասոնք արմենները էին»: Իսկ երկրի մեջ խաղաղություն էր և բարեկեցություն: Հայաստան եկած օտարները, եթե թշնամիներ չէին, կվայելեին հայկական անսահման հյուրասիրությունը: «Անոնց ամեն տեղ կգտնեին կերուխում ընելիս և ուրախ... Եվ սա Արմենիան էր»[2]:

Այո՛, այդպես էին արմենները, և այդպես էր Արմենիան 400 թվին Քրիստոսեն առաջ: Ամուր սահմաններ, կարգապահ զորք, հարուստ երկիր, զվարթ, աշխատունակ և խաղաղասեր ժողովուրդ:

Տարիներ անցան: Դասական Հունաստանը հեռացավ պատմական բեմեն, բայց տվավ իր վերջին մեծ զավակը՝ Աղեքսանդր Մակեդոնացուն, որ տապալեց 334–331 թվերուն Ք. ա. Պարսկաստանի հզորագույն պետությունը և նվաճեց ողջ Արևելքը՝ հելլեն մշակույթը տարածելով իր նվաճած երկիրներու մեջ: Հույն ժողովրդավար սկզբունքները, մարդկայնական փիլիսոփայությունը և կրոնը, նուրբ և կենդանի արվեստը բախվեցան հին արևելյան բռնապետական սկզբունքներու, անհատի բարոյական իրավունքները ժխտող դավանանքի, ծանր և ճնշիչ արվեստին հետ: Այս երկու մեծ ուժերու հանդիպումեն առաջացավ նոր, հելլենիստական քաղաքակրթությունը, ուր Արևելքի ճնշիչ ձևերը մեղմացան և գունավորվեցին հելլեն մշակույթի մարդկայնական գաղափարներով: Այդ նոր քաղաքակրթությանը վիճակված էր իր դրոշմը դնել գալիք հռոմեական քաղաքակրթության և քրիստոնեության վրա:

Աղեքսանդր Մակեդոնացու գործունեությունը ունեցավ այդպիսով երկու հետևանք.–մեկը՝ ռազմական, որ կարճատև եղավ, և մյուսը՝ քաղաքակրթական, որ խոր և հարատև էր:

Ի՞նչ դիրք բռնեց այս նոր երևույթներուն հանդեպ Հայաստանը: Պատմիչնե-

[1] Ալգորիթմի քաղաքական տեսանկյունի մասին տե՛ս. Краснов П. И., Алгоритми политического решения.– Политическая энциклопедия, М. 2000, т.1, с. 39–40.

[2] Xenophontis, Anabasis, IV, 3, 5. Պատմիչներու վկայությունները կուտանք Վանանդյանի թարգմանությամբ:

ռու վկայությամբ, 331 թվի (Ք. ա.) Գավգամելայի մեծ ճակատամարտին Նինվեի ավերակներուն մոտ, ուր Պարսկաստանը կրեց իր վերջին ճակատագրական պարտությունը, Աղեքսանդրի դեմ պարսիկներու կողքին կռվին մասնակցած էր նաև հայկական զորքը՝ 40.000 հետևակ և 7.000 ձիավոր[1]: Այն ժամանակվա համար սա պատկառելի ուժ մըն էր:

Հայկական զորքը բաժանված էր երկու մասի. մեկը՝ Մեծ Հայքի, մյուսը՝ Փոքր Հայքի: Հայ զորավարներն էին Օրոնտեսը (Երվանդ) և Միթրաուստեսը: Այս փաստը բավական է ցույց տալու համար, թե ի՛նչ կարևոր ռազմական դեր կխաղար Հայաստանը Աղեքսանդր Մակեդոնացու օրերուն:

Հայկական զորքը պարտվեցավ պարսիկներու հետ միասին: Սակայն, շնորհիվ այն բանին, որ Աղեքսանդր Մակեդոնացու ճանապարհը Հայաստանի վրայով չէր ընկած, Հայաստան պահեց իր անկախությունը: Աղեքսանդր Մակեդոնացին ստիպվեցավ հատուկ զորաբաժիններ ուղարկել Հայաստան՝ զայն նվաճելու համար[2]: Բայց այս անգամ ևս հայ ազատասիրությունը հաղթող հանդիսացավ: Արդյո՞ք Աղեքսանդր Մակեդոնացին հաջողեցավ նվաճել Հայաստանը: Պատմական տվյալները հակասական են: Աղեքսանդր Մակեդոնացին իր ճառի մեջ կհայտարարեր, որ ինքը նվաճած է Հայաստանը, ինչպես նաև Կապպադովկիան և Պափլագոնիան[3]: Աղեքսանդր Մակեդոնացու կայսրության բաժանման ժամանակ, 323 թվին, Հայաստանը բաժին ինկավ մակեդոնացի զորավար Նեոպտոլեմոսին: Բայց անոր մահվընեն հետո, 321 թվին, Հայաստանը արդեն չի հիշատակվիր մակեդոնական սատրապություններու ցուցակի մեջ, իսկ 316 թվին Ք. ա. Հայաստանը դարձյալ կկառավարվի բնիկ Օրոնտեսի (Երվանդ) ձեռքով, որը արդեն հանդգնած էր մենամարտի ելլել 331 թվին Աղեքսանդր Մակեդոնացու դեմ: Ինչպես կերևի, այդ անկուն զինվորը հաջողած էր, հակառակ Պարսկաստանի խորտակման, պահել Հայաստանի անկախությունը:

Այնուհետև 301 թվին, քաղաքական անընդհատ ալեկոծություններու ընթացքին, Հայաստանը դարձյալ կենթարկվի հելլենիստական Սելևկյան կայսրության: Բայց, ինչպես կնկատե Մանանդյանը, Սելևկյան «գերիշխանությունն այս լեռնային և դժվարամատչելի երկիրի մեջ, ընդհանրապես ավելի անվանական էր, քան իրավական: Ճանաչելով Սելևկյան թագավորներուն իբրև գերագույն պետ՝ Մեծ Հայքը, ըստ երևույթին՝ նաև Ծոփքը, պահպաներ էին իրենց ներքին ինքնուրույնությունը և կկառավարվեին բնիկ իշխաններու ձեռքով, որոնք սկզբնաղբյուրներու մեջ կանվանվեն երբեմն թագավորներ»:

Ֆրանսացի ակադեմական Ռ. Գրուսսեն կգրե Հայաստանի այդ դիմադրական ուժի մասին.

«Հայաստանը գլխավորող պարսկա–հայկական վարչական տարրի այդ հարատևությունը հետաքրքրական փաստ է: Այդ երկրի համար տեղական ինքնուրույնության առաջին գրավականն էր այդ: Անկասկած, նաև Մակեդոնյան կայսրության վերջնական բաժանման ժամանակ 301 թվին հայկական սատրապությունը մտավ Սելևկոսի բաժնի մեջ: Սակայն, Հայաստանը փաստորեն առաջին մակեդոնյան նահանգը եղավ, որ ազատվեց Աղեքսանդրի հաջորդներու իրական իշխանութենեն»[4]:

Այս բոլորեն կհետևցնենք, որ Հայաստանը զերծ մնաց հելլենիստական ռազմական–քաղաքական տիրապետումեն:

Արդյո՞ք Հայաստանը զերծ մնաց հելլենիզմի մշակութային ազդեցութենեն:

[1] Cutius Rufus, III, 2.
[2] Strabo, XI, 14; Arrian, III, 16; Curtius Rufus, VI, 3.
[3] Curtius Rufus, VI, 3.

[4] Մանանդյան, Քննական տեսության համաձայն հայ ժողովրդի պատմության մեջ, 93, 102: Grousset, Hustoire de l'Armenie, էջ 79:

Անշուշտ, ոչ: Բայց դժվար է այսօր որոշել այդ ազդեցության չափը: Հայաստանի հնագույն հիմքի վրա, որն ինքն արդեն լրիվ արևելյան չէր, ծծված ըլլալով հիթիթական, ուրարտական և փռյուգական հյութերով, սկսվեցավ շերտավորվել հելլենիզմը: Հույն գրականությունը, փիլիսոփայությունը, արվեստը մուտք գործեցին Հայաստան: Ըմբոստանալով հելլենիզմի քաղաքական տիրապետության դեմ՝ Հայաստանը սկսեց յուրացնել հելլենիզմի լավագույն կողմը՝ մշակույթը: Բայց արևելքեն կշարունակեր ներգործել Պարսկաստանը: Եվ տարբեր կողմեն եկող այս հոսանքները կկերպարանափոխվեին զորեղ հայ անհատականության միջոցով՝ նոր թռիչք տալու համար հայ քաղաքակրթությանը:

Հայաստանը շրջապատող մյուս երկիրները չունեցան այդ կուռ անհատականությունը: Ենթարկվելով հելլենիզմի ռազմական տիրապետությանը, ստեղծագործող ձիրքերեն զուրկ, անոնք դարձան ամուլ քաղաքական խաղերու թատերաբեմ և անոնց մեջ ծաղկած մշակույթը կորավ անհետ:

Երբ Աղեքսանդրի կտոր–կտոր եղած կայսրության ժառանգորդները կշարունակեին պայքարը իրարու դեմ, Հայաստանը մնաց խաղաղ ապաստարան մը, ուր քաղաքական տարագիրները օգնություն կգտնեին՝ իրենց երկրի անկախությունը վերականգնելու համար:

Այսպես, կպատմե Դիոդորը.

«Երբ Արիարաթն այստեղ հաղթվեցավ (մակեդոնացիներեն) և ընկավ ճակատամարտի մեջ, Կապպադովկիան, թե՛ ինքը և թե՛ սահմանակից երկիրները անցան մակեդոնական իշխանության տակ: Իսկ... նախկին թագավորի որդին, հուսահատության հասնելով այս անցքերու պատճառով, փախավ քչերու հետ Արմենիա: Քանի մը ժամանակ հետո... ան, վերցնելով զորք արմեններու թագավոր Արդոատեսեն, մակեդոնացիները անհապաղ դուրս վտարեց երկրեն և տեր դարձավ իր հայրենի իշխանության»[1]:

Ասիկա տեղի էր ունեցած մոտավորապես 270–260 թվին Ք. ա.: Ալեկոծվող քաղաքական ծովի մեջ Հայաստանը առաջվան պես կբարձրանար՝ հաստատուն, խաղաղ, ուրիշներուն որպես փարոս ներկայացող:

Պոնտոսի թագավոր Միհրդատը իրավունք պիտի ունենար հպարտորեն ըսելու հետո, Ա. դարուն Ք. ա., իր և իրեն բարեկամ պետություններու մասին, «որ ան ինքը այնպիսի երկիրներու թագավոր է, որոնք ոչ միայն հավասար են հռոմեական պետությանը, այլև կարող են դեմ հանդիման կանգնել նույնպես և Մակեդոնականին: Իր հպատակ ժողովրդներեն և ոչ մեկը կրած չէ օտար իշխանություն. անոնք միշտ հնազանդվեր են տեղական միայն իրենց թագավորներուն: Եթե կուզեն, թող քննության առնեն Կապպադովկիան կամ Պափլագոնիան, Պոնտոսը կամ Բյութանիան, նմանապես և Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը: Այդ ժողովրդներեն և ոչ մեկին ձեռք չէին տված ոչ ինքը Աղեքսանդրը, որ նվաճեր էր ամբողջ Ասիան, ոչ ալ ոևէ մեկը անոր հաջորդներեն կամ հետնորդներեն»[2]:

Ավա՛ղ, Միհրդատը չէր գիտեր, որ իր թված պետություններեն միայն Մեծ և Փոքր Հայքերը պիտի ապրեին դեռ դարեր: Հայաստանը շրջապատված ըլլալով իրմե ավելի հետամնաց ժողովրդներով, սկսեց իր ազդեցությունը տարածել անոնց վրա.–

«Կպատմեն, որ Արմենիան եղեր է առաջ փոքր և մեծացեր է Արտաշեսի և Զարեհի ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի [3] զորավարներն էին և անոր անկումեն հետո թագավորեցին... Ասոնք ընդարձակեցին իրենց երկիրնե-

[1] Diodori Bibliotheca Historica, XXXI, 19, p 4–5.
[2] Justini, Epitoma Historiarum Philippicarum Pompeii Trogi, XXXVIII, 7.
[3] 223–187 թ. Ք. ա.:

ռու սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդները»...

Ստրաբոնը կթվե այդ շրջանները, որոնք կազմեցին պատմական Հայաստանի հայտնի նահանգները, և կավելցնե. «Այնպես որ բոլորը միալեզու եղան»[1]:

Ասոնք չափազանց կարևոր տողեր են: Ստրաբոնը ցույց կուտա, որ Գ.–Բ. դ. Ք. ա. Հայաստանը դարձած էր խոշոր պետություն և, որ գլխավորն է, այդ պետության բոլոր շրջանները «միալեզու» եղած էին: Այսինքն՝ հայ լեզուն, ուրեմն և հայ մշակույթը այնքա՛ն զորեղ էին, որ կարողացած էին գերիշխել ընդարձակ երկրամասերու և տարբեր ցեղերու վրա: Ռ. Գրուսսեն կնկատե. «Այդ առաջին անգամն էր, որ հայ ժողովուրդը, մինչ այդ ենթարկված մեդա–պարսկական գերիշխանության, իսկ հետո գոնե տեսականորեն, հունական գերիշխանության, հաստատեց իր կատարյալ անկախությունը»[2]:

Հայաստանի հաղթանակը հետևանքը չէր այն կարճատև և ավերիչ ռազմական արշավանքներուն, որոնք սովորական էին հին Արևելքի համար: Հայ քաղաքակրթության և հայ պետականության մնայուն հաղթանակն էր այդ, բարձրագույն հաղթանակը, որուն կարող է ձգտել բարձրագույն կարողություններ ունեցող ժողովուրդ մը:

Ստրաբոնը կավելցնե նաև մեկ ուրիշ կարևոր դիտողություն Փոքր Հայքի և Ծոփքի մասին.

«Փոքր Հայքը բավական պտղաբեր երկիր է: Այստեղ ևս, ինչպես և Ծոփքի մեջ, երկիրը միշտ կկառավարեին սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս արմեններուն և կամ իրենց գործերը կվարեին առանձին և անկախ:

«Փոքր Հայքն իրեն կհպատակեցներ խալդայները և տիբարենները, այնպես որ անոր իշխանությունը կտարածվեր մինչև Տրապիզոն և Փառնակիա»[3]:

Այս տողերեն պարզ կերևի, որ Փոքր Հայքը և Ծոփքը կազմակերպված էին որպես ինքնուրույն պետություններ և միաժամանակ պետական համագործակցություն էին հաստատած մյուս «արմեններուն» հետ, որպես մեկ միասնական հայ քաղաքակրթության բաղադրիչ մասերը:

Ստրաբոնի խոսքերը կուրվագծեն մեր առջև, կարծես, նախնական դաշնակցային (ֆեդերաթիվ) պետության մը պատկերը, ինչքան ալ անհամապատասխան ըլլան այդ հին հայկական կազմակերպությունները մեր այսօրվա պետական հասկացողություններուն:

Տարբերությունը նախ և առաջ այն էր, որ, չնայած քաղաքակրթության նույնության, այդ երեք հայ պետությունները չունեցան ընդհանուր և միասնական ղեկավարություն: Պետական համագործակցությունը և համերաշխությունը միայն ժամանակավոր բնույթ կկրեր: Երեք պետություններու շահերը հաճախ չէին համընկներ: Հայաստանը նոր էր դուրս եկած տոհմատիրական կարգերեն և, կազմակերպվելով որպես պետություն, չէր իրականացրեր այդ պետության միասնականությունը:

Բայց ինքը միասնականության գաղափարը արդեն գոյություն ուներ: Միայն աննպաստ քաղաքական պայմանները արգելք կըլլային անոր կենսագործման: Այդ կհաստատվի նաև Հ. Մանանդյանի հետաքրքիր և խոր վերլուծումով:

Մանանդյանը սկիզբը շատ խիստ կմոտենա խնդրին և կճշտե համապետականության գոյությունը այդ ժամանակվա Հայաստանի մեջ, իսկ հետո կընդունե անոր գոյությունը որպես գաղափար: Հետևինք Մանանդյանի ըսածներուն.

«Հայաստանում և Կապպադովկիայի հյուսիս–արևելքում կազմվել էին... երեք

[1] Strabo, XI, 14.
[2] Grousset, Hist., p 81:
[3] Strabo, XII, 3.

հզոր թագավորությունների առաջացումը քաղաքական տեսակետից մի նոր դարագլուխ է կազմում հայ ժողովրդի պատմական անցյալում»:

Սակայն, Մանանդյանը կնկատե, որ այդ երեք թագավորությունները չունեցան միասնական պետականություն: «Հայախոս երկիրների պետական կազմավորումն ու քաղաքական հզորացումն ուներ մի շատ թույլ կազմ: Նրանք հենց սկզբից չկազմակերպվեցին իբրև պետական միահար մի ամբողջություն, այլ բաժանվեցին արևմտյան, հարավ–արևմտյան և հյուսիս–արևելյան ինքնիշխան մասերի, որոնք հաճախ իրար դեմ կռիվներ էին մղում: Այս երեք թագավորություններից յուրաքանչյուրն ուներ իր սեփական կենտրոն–մայրաքաղաքը, իր տեղական ավանդությունները և իր տնտեսական ու քաղաքական առանձին շահերը: Եվ միանգամայն հասկանալի է, իհարկե, որ արմենների ցրվածությունն ու այս բաժանումը արգելք էին հանդիսանալու նրանց ընդհանուր ու համերաշխ գործակցության»:

Բայց, չնայած այս խիստ տողերուն, Մանանդյանը կընդունե միասնական հայ պետության գաղափարի գոյությունը, երբ կգրե.

«Արմենական երկիրների միացման կարևորությունը, հավանորեն, գիտակցվել է առավելապես նրանց քաղաքական վերելքի շրջանում: Հայտնի է, որ Արտաշես Ա.–ը, որը... անչափ ընդարձակել էր Մեծ Հայքը, ուզեր էր նվաճել հարևան Ծոփքը: Սակայն, Մեծ Հայքի զորեղացումը և արմենական երկիրների միացումը ցանկալի ու հանդուրժելի չէին Կապպադովկիայի ու Պոնտոսի համար»[1]:

Եվ Հայաստանը շրջապատող օտար ժողովուրդներու քաղաքական խաղերը խոչընդոտ հանդիսացան այս անգամ, ինչպես և շատ ուրիշ անգամներ, Հայաստանի միավորմանը: Ոչ քաղաքական կազմակերպման ընդունակությունը և ոչ ալ միասնականության գաղափարը կպակսեին հայերուն: Ավելի նպաստավոր քաղաքական պայմաններու մեջ հայ միասնական քաղաքակրթությունը պիտի ունենար և միասնական պետականություն:

Տարիներ անցան: 94 թվին Ք. ա. հայկական պետությունը ժառանգեց Տիգրան Բ.: Անոր անվան հետ կապված է Հայաստանի աննախընթաց նոր վերելքը: Օգտվելով նախկին հելլենիստական շերտավորումներե՝ Տիգրանը հաջողեցավ ավելի ամրորեն ու հարատևորեն կապել Հայաստանը արևմտյան–հելլենիստական քաղաքակրթությանը: Թեև Տիգրանի ստեղծած ընդարձակ կայսրությունը կործանվեց, բայց հելլենիզմով բեղմնավորված հայ մշակույթը մնաց: Այնուհետև այդ մշակույթն ալ վերամշակվեց հայկական մշտնջենական դարբնոցի մեջ և անկե դուրս եկավ մարդկության առաջին քրիստոնեական արվեստը: Չկային այլևս Պոնտոսը, Կապպադովկիան, Պափլագոնիան: Պարսկաստանը, պահ մը, տատանվելով Արևմուտքեն եկած հելլենիզմի և քարացած Արևելքի միջև, վերջնականապես մնաց Արևելքին: Սյուրիան, կարճատև և չքնաղ քրիստոնեական ծաղկումե հետո, նորեն անհայտացավ: Միայն Հայաստանը մնաց որպես պետություն և քաղաքակրթություն:

Դարեր անցան: Եվ 1000 թվին, երբ Արևմուտքը սարսափահար կսպասեր աշխարհի կործանմանը, Հայաստանը, միշտ հենված հելլենիզմի վրա և միշտ վերամշակելով արևելյան մշակույթներու լավագույն կողմերը, արդեն բացած էր նոր էջ մը ևս՝ ավատական–միջնադարյան արվեստը: Երկիրը բաժան–բաժան էր եղած ներքին կռիվներու հետևանքով: Հայ նախարարները, ինչպես և Եվրոպայի ֆեոդալները, հաճախ միայն իրենց անձնական շահերը կհետապնդեին: Արտաքին թշնամին կոչնչացներ ամեն ինչ: Բայց թշնամին կարողացավ միայն ֆիզի-

1 Մանանդյան, «Քնն. պատմ.», էջ 118–120:

քական ոչնչացում իրագործել: Ան պարտվեցավ հայկական հոգեկան արժեքներու առջև: Չնայած իրենց երկպառակություններու, հայ իշխանությունները կարողացան հերոսաբար պահպանել հայ միասնական քաղաքակրթությունը:

Եվ, որ ամենեն կարևորն է, հայ քաղաքակրթությունը մնաց միշտ արևմտյան իր ոգով: Հայ քաղաքակրթության մեջ մենք չենք գտներ Արևելքին յուրահատուկ կրավորական վերաբերմունքը դեպի աշխարհը և ոչ ալ մարդու դատողությունը ճզմելու չափազանց զորավոր ձգտումը: Հայը միշտ մնաց իր արվեստի մեջ զգաստ, դատող, գործունյա, մարդկային: Այդ իմաստով Հայաստանը եղավ հելլենիզմի միակ հավատարիմ զավակը, որը հունական մարդկայնանման քաղաքակրթությունը հասցրեց մինչև Միջնադար: Ճիշտ է, թե ուրիշ քրիստոնյա ազգեր, սնվելով նույն հելլենիստական արմատներեն, կերտեցին մեծ քաղաքակրթություններ: Բայց հայ քաղաքակրթությունը եղավ հարատև, հակառակ քաղաքական անկախության կործանումներու:

Ի՞նչ տարօրինակ պատմական հակասություն: Հայաստանը միակը Արևելքի մեջ ժամանակին ընդդիմացավ Աղեքսանդր Մակեդոնացու ռազմական արշավանքին: Բայց Հայաստանը միակը եղավ նաև, որ խորապես, խաղաղորեն և տևական կերպով յուրացրեց Աղեքսանդր Մակեդոնացու հետ Արևելք եկած Արևմտյան մշակույթը:

Հայ պետականության, հայ քաղաքակրթության զգացմունքը վերապրեց դարավոր այնպիսի պայմաններու մեջեն, որոնք մահացու պիտի ըլլային և եղան մահացու՝ ավելի թույլ ազգերու համար:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 14.01.14 թ.

У ИСТОКОВ ЦИВИЛИЗАЦИИ

ЛЕВОН ШИРИНЯН

Заведующий кафедрой политологии и истории права АГПУ имени Х. Абовяна, доктор политических наук, профессор

Каждый из основополагающих научных вопросов, относящихся к определенному методу, в данном случае к применению принципа актуализма, представляет события исторического прошлого и их целостное понимание в новом свете. При помощи этого метода автор пытается показать и объяснить Библейскую гипотезу об армянской цивилизации. Согласно генетическим и лингвистическим библейским данным, Армения имела автохтонную цивилизацию.

Дата представления статьи: 14.01.14 г.

IN THE SOURCES OF CIVILIZATION

LEVON SHIRINYAN

Doctor of Political Sciences, Professor, Head of the Chair of Politics and Law History, ASPU after Kh. Abovyan

Every scientific statement of a given method obtains a principal role and it sheds light on the historical event as well as it changes the whole perception of the problem. In this case the author uses the principle of actuality. Via this method he tries to illustrate and give some explanations about the Biblical hypothesis on Armenian civilization. According to genetic and linguistic data of the Bible, Armenia had an aborigine civilization.

Article submission date 14.01.14